ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդայի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի գյուղապետարան հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-2/թափուր պաշտոն զբաղեցնելու համար:
Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները, աջակցում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ:
Առաջատար մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է .
-առնվազն միջնակարգ կրթություն
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության հողային և ջրային օրենսգրքերի, «ընդերքի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Բնապահպանական վճարների, դրույքաչափերի մասին», «Ջրօգտագործողների և Ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն